ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 6 1962

ՎԼԱԴԻՄԻՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ»-Ը

XVIII դարի 70—80-ական թվականներին, հեռավոր Հնդկաստանի Մադրաս քաղաքում, հայտնի վաճառական Շահամիր Շահամիրյանի գլխավորած հնդկահայ առևտրական բուրժուազիայի քաղաքական-հայրենասիրական խմբակը զգալի գործ է կատարել օտար բարբարոս տիրապետության ներքո տվայտող հայ ժողովրդի ազատագրության ու հայրենի հողի վրա հայկական անկախ պետականություն ստեղծելու գաղափարը արծարծելու ուղղությամբ։ Շահամիրյանների տպարանում մադրասցիները լույս են ընծայել ու տարածել հայրենիքի ազատագրման և Հայաստանում ստեղծվելիք քաղաքական-հասարակական կարգի վերաբերյալ ծրագրային կարևորագույն վավերագրեր, այդ խնդիրների կապակցությամբ աշխույժ նամակագրություն են ունեցել Ղարաբաղի մելիքների, Քարթլ-Կախեթի թագավոր Հերակլ II-ի, Էջմիածնի կաթողիկոսների և բազմաթիվ այլ անձանց հետ։ Մադրասցիների գործունեության այլևայլ կողմերն ու գաղափարները վաղուց հետե, հատկապես վերջին տարիներս, եղել են հայ պատմագրության ուշադրության կենտրոնում, ենթարկվել մանրազնին քննության և լուրջ ուսումնասիրության։ Սակայն նրանց ազատագրական գործունեության հետ կապված մի ուշագրավ փաստ դեռևս ոչ միայն չի ստացել իր պատշաճ գնահատականը, այլև համարյա մնացել է ստվերի մեջ։ Դա Շ. Շահամիրյանի պատվերով Հայաստանի քարտեզի՝ «Աշխարհացույց Հայաստանեայց»-ի հրատարակությունն է, որ իրագործվել է Վենետիկում 1778 թ.։

Այդ քարտեզի նկատմամբ ուսումնասիրողների «անտարբերության» պատճառը, անշուշտ, նրա խիստ հազվադյուտ լինելն է։ Հայաստանում, որքան մեզ հաջողվեց պարզել, չի պահպանվել նրանից և ոչ մի օրինակ, ըստ երևույթին այդ քարտեզը հազվադյուտ է նաև արտասահմանում, դրանով պետք է բացատրել այն, որ այդ քարտեզը տեղ չի գտել նույնիսկ մի այնպիսի արժեքավոր աշխատության մեջ, ինչպիսին է վերջերս Փարիզում Զ. Խանզադյանի հրատարակած «Atlas de cartographie historique de l'Arménie»-ն։

«Աշխարհացույց Հայաստանեայց»-ի մի օրինակի ու նրանից հանված պատճենի հետ ծանոթացել ենք 1955 թ. Մոսկվայում՝ ՍՍՌՄ Կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվում աշխատելիս[1] *և ներկայումս ընդհանուր նկարագրությամբ ու մի քանի ծանոթագրություններով հանդերձ հրա-*

[1] Центральный Государственный Военно-Исторический архив СССР (ЦГВИА), фонд 416, дело 303.